

յովականին տարբերությունը կազմել էր մեկ տասերորդ վայրկյան. նույնքան փոփոխություն նկատվեց նաև հաջորդ երկու տարվա ընթացքում: Անցյալ աւարվա վերջին ֆառորդում տեղի էր ունենում երկարացում, ընդ որում յուրաքանչյուր հաջորդ օր իր նախորդից երկարում է մոտավորապես վայրկյանի երկուամագրերորդ մասի չափով:

Անկասկած, առօրյա կյանքում այդպիսի փոփոխությունները ոչ միայն աննկատելի են, այլև անհնար է դրանց հաշվի առնելը. սակայն աստղագետների համար այն մեծ կարևորություն ունի բնական ու արհեստական երկնային մարմինների դիրքերի, ինչպես նաև նրանց շարժումների նշգրիտ ուսումնասիրությունների համար: Մասնավորապես արհեստական արբանյակների շարժման պարամետրերի փոփոխություններով որոշվում է մեր մթնոլորտի վերին շերտերի խտությունը, երկրի

նշգրիտ ձևը, նրա մեջ զանգվածի բաշխրվածությունը և այլն:

Ինչ պատճառով են տեղի ունենում օրվա տևողության այդ փոփոխությունները. այդ մասին կան մի շարք ենթադրություններ: Օրվա միակողմանի ու դարավոր երկարացումը կապվում է մեր երկնային հարևանի՝ Լուսնի ազդեցության հետ (մակընթացություններ և տեղատվություններ): Ինչ վերաբերում է վերջին ժամանակներս հայտնաբերված փոփոխություններին, ապա դրանք կառող են կապված լինել երկրի ընդերքում ենթադրվող լավայի և կամ երկրի կեղևի պարբերաբար պոլսացիայի հետ: Վերջին դեպքերում փաստորեն երկիրը իր շափերը մեծացնում և փոքացնում է, իսկ շարժման ֆանակի հաստատուն մնալու պատճառով հետևանքը պետք է լինի նրա պտտման արագության փոփոխվելը:

Լ. ՏԻԳՐԱՆՅԱՆ



ՔՎԱՆՏՈՂՈՄՆԵՐԸ ԲՈՒՅԱՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ ՄԱՐԿԱՆՈՒՄՆԵՐ

Երկար ժամանակ ֆիզիոլոգները ձգտում էին պարզել, թե ինչպես են բույսերն օգտագործում արևի լույսը օրգանական էլեմենտներ ստեղծելիս: Քլորոֆիլի յուրացման և նոր բջիջների զոյացման միջև ընկած պրոցեսների շղթայում շատ օղակներ էին պակասում: Եվ ահա ամերիկացի մասնագետները հայտնագործել

են «քվանտոզոմների»՝ էլեկտրականություն արտադրելու ընդունակ ամենափոքր կենդանի բջիջների գոյությունը որոշ բույսերի մեջ: Քվանտոզոմների տրամագիծը կազմում է միլիմետրի մոտ քսան միլիոներորդական մասը և յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է բլորոֆիլի մոտ 20 մոլեկուլներից բաղկացած ողկույզ: Դրանք իսկական կիսահաղորդիչներ են, որոնք զործում են որպես բջիջներից կազմված ֆոտոէլեկտրական և ջերմաէլեկտրական մարտկոցներ: Այս մասնիկները լույսը փոխակերպում են էլեկտրաէներգիայի, որը բույսերի բջիջների կողմից օգտագործվում է իրենց աճի համար անհրաժեշտ պրոտեինն արտադրելու համար:

«Սալենա Նյուս լետտեր»